18. ՊԱՌԱՎՆ ՈՒ ԷԾԸ

Մե պառավ է ընում, մե էծ է ունենում: Մեգ օր պառավն էտ էծը կթում է ու կաթը դնում է սալգի տակը, ու ինքը էրթում է ժամ: Ինչուր ետ է գալիս, մե աղվես է գալիս ու էտ կաթն ուտում է:

Պառավը ջգրվում է ու կպչում է աղվսի պոչիցն ու ասում է.—Աղվե՛ս ախպեր, կա՛թս տուր:

Աղվեսը էրթում է իծու մոտ ու ասում է.

—Է՛ծ ախպեր, ինձի մե քիչ կա՛թ տուր,
Կաթը տանեմ, տամ պառվին,
Պառավը պոչս վիլ անի,
Էրթամ չարուխ-մարուխ կռծելու:

Էծն ասում է.—Հալա մե քիչ տե՛րև տուր, ուտեմ:
Աղվեսն էրթում է ծառի մոտ ու ասում է.

—Ա՛յ ծառ, ինձի մե քիչ տե՛րև տուր,
Տերևը տանեմ, տամ իծուն,
Էծն ինձի կաթ տա,
Կաթը տանեմ, տամ պառվին,
Պառավը պոչս վիլ անի,
Էրթամ չարուխ-մարուխ կռծելու:

Ծառն ասում է.—Հալա մե քիչ ջո՛ւր տուր, խմեմ:
Աղվեսն էրթում է ախպրի մոտն ու ասում է.

—Ա՛յ ախպուր, ինձի մե քիչ ջո՛ւր տուր,
Ջուրը տանեմ, տամ ծառին,
Ծառն ինձի տերև տա,
Տերևը տանեմ, տամ իծուն,
Էծն ինձի կաթ տա,
Կաթը տանեմ, տամ պառվին,
Պառավը պոչս վիլ անի,
Էրթամ չարուխ-մարուխ կռծելու:

Ախպուրն ասում է.—Հալա ախչգներուն ասա՛, գան դովրս խաղան:

Աղվեսն էրթում է ախչգներու քով ու ասում է.

—Ա՛յ ախչգներ, արի՛ք ախպրի դովրը խաղցե՛ք,
Ախպուրն ինձի ջուր տա,
Ջուրը տանեմ, տամ ծառին,
Ծառն ինձի տերև տա,
Տերևը տանեմ, տամ իծուն,
Էծն ինձի կաթ տա,
Կաթը տանեմ, տամ պառվին,
Պառավը պոչս վիլ անի,
Էրթամ չարուխ-մարուխ կռծելու:

Ախչգներն ասում են.—Հալա օսկերիջին ասա՛, մեզի մատնի տա:
Աղվեսն էրթում է օսկերիջի մոտն ու ասում է.

—Ա՛յ օսկերիջ, ինձի մե դանա մատնի՛ տուր,
Մատնին տանեմ, տամ ախչգներուն,
Ախչգներն էրթան, ախպրի դովրը խաղան,
Ախպուրն ինձի ջուր տա,
Ջուրը տանեմ, տամ ծառին,
Ծառն ինձի տերև տա,
Տերևը տանեմ, տամ իծուն,
Էծն ինձի կաթ տա,
Կաթը տանեմ, տամ պառվին,
Պառավը պոչս վիլ անի,
Էրթամ չարուխ-մարուխ կռծելու:

Օսկերիջն ասում է.—Հալա ինձի մե ձո՛ւ տուր:
Աղվեսն էրթում է հավի մոտն ու ասում է.

—Ա՛յ հավ, ինձի մե ձու տուր,
Ձուն տանեմ, տամ օսկերիջին,
Օսկերիջն ինձի մատնի տա,
Մատնին տանեմ, տամ ախչգներուն,
Ախչգներն էրթան, ախպրի դովրը խաղան,
Ախպուրն ինձի ջուր տա,
Ջուրը տանեմ, տամ ծառին,
Ծառն ինձի տերև տա,
Տերևը տանեմ, տամ իծուն,
Էծն ինձի կաթ տա,
Կաթը տանեմ, տամ պառվին,
Պառավը պոչս վիլ անի,
Էրթամ չարուխ-մարուխ կռծելու:

Հավն ասում է.—Հալա կո՛ւտ տուր, օր ուտեմ:
Աղվեսն էրթում է դմբի մոտն ու ասում է.

—Ա՛յ դումբ, ինձի կո՛ւտ տուր,
Կուտը տանեմ, տամ հավին,
Հավն ինձի մե ձու տա,
Ձուն տանեմ, տամ օսկերիջին,
Օսկերիջն ինձի մատնի տա,
Մատնին տանեմ, տամ ախչգներուն,
Ախչգներն էրթան, ախպրի դովրը խաղան,
Ախպուրն ինձի ջուր տա,
Ջուրը տանեմ, տամ ծառին,
Ծառն ինձի տերև տա,
Տերևը տանեմ, տամ իծուն,
Էծն ինձի կաթ տա,
Կաթը տանեմ, տամ պառվին,
Պառավը պոչս վիլ անի,
Էրթամ չարուխ-մարուխ կռծելու:

Դումբն ասում է.—Հալա ինձի մե քիչ կո՛ւ տուր:
Աղվեսն էրթում է գոմշի մոտ ու ասում է.

—Ա՛յ գոմեշ, ինձի մե քիչ կո՛ւ տուր,
Կուն տանեմ, տամ դմբին,
Դումբն ինձի կուտ տա,
Կուտը տանեմ, տամ հավին,
Հավն ինձի մե ձու տա,
Ձուն տանեմ, տամ օսկերիջին,
Օսկերիջն ինձի մատնի տա,
Մատնին տանեմ, տամ ախչգներուն,
Ախչգներն էրթան, ախպրի դովրը խաղան,
Ախպուրն ինձի ջուր տա,
Ջուրը տանեմ, տամ ծառին,
Ծառն ինձի տերև տա,
Տերևը տանեմ, տամ իծուն,
Էծն ինձի կաթ տա,
Կաթը տանեմ, տամ պառվին,
Պառավը պոչս վիլ անի,
Էրթամ չարուխ-մարուխ կռծելու:

Գոմեշն ասում է.—Հալա ինձի դամի՛չ տուր, ուտեմ:
Աղվեսն էրթում է չամբը, մե փոշտա դամիչ է քաղում ու բերում է, տալիս է գոմշին, հենչաղը

Գոմեշը կու է տալիս,
Գոմեշը տալիս է դմբին,

Դումբը կուտ է տալիս,
Կուտը տալիս է հավին,
Հավը ձու է տալիս,
Ձուն տալիս է օսկերիջին,
Օսկերիջը մատնի է տալիս,
Մատնին տալիս է ախչգներուն,
Ախչգները էրթում են ախպրի դռվրը խաղլիս են,
Ախպուրը ջուր է տալիս,
Ջուրը տալիս է ծառին,
Ծառը տերև տալիս է,
Տերևը տալիս է իծուն,
Էծը կաթ է տալիս,
Կաթը տալիս է պառվին,
Պառավը պոչը վիլ է անում,
Էրթում է չարուխ-մարուխ կոծելու:

Աստծուց հիրեք խնձոր վեր ընգավ, մեգն՝ ասողին, մեգը՝ լսողին, մեգն էլ՝ հանգաջ դնողին: